16 հուլիսի 2020 թվականի N 1184 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 786-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՄԱ ԿՈՄՊՐԵՍՈՐ» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 786-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել հավելվածի 3-10-րդ կետերը.

2) հավելվածը 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-14-րդ կետերով.

«

11.	7614900000	Այլումինե մետաղալար	Մետաղի շերտը նստեցնող հաստոցի համար	կգ	500	Անգլիա	1 551 294
12.	7505220000	Նիկել-այլումինե մետաղալար	Մետաղի շերտը նստեցնող հաստոցի համար	կգ	27.2	ԱՄՆ	766 522
13.	7223009900	Չժանգոտվող պողպատից մետաղալար 1.6 մմ հաստությամբ (AISI 316 ISI)	Մետաղի շերտը նստեցնող հաստոցի համար	կգ	30	Իտալիա	152 177
14.	7904000000	Ցինկից մետաղալար	Մետաղի շերտը նստեցնող հաստոցի համար	կգ	480	Գերմանիա	1 123 373

».

3) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «33 449 002» թիվը փոխարինել «31 010 966» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. հուլիսի
Երևան